

ՊԵՏՄԵ-ԲԱՆԵՍԻՐԵԿԱՆ**ՀԱՅՈՑ ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԸ****1. ՆԱԽԱՀԱՅԿԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐ**

Նախահայկական անունները պատկանում են այն ժողովրդին, որ գրառում էր Հայաստանը: Հայոց լեզուն անշուշտ շատ բան վերցրեց նրանցից. այս կարգին են պատկանում մեր տեղանունները: Դրեթէ ստոյգ է որ Հայաստանի տեղանունները ամենամեծ մասամբ նախահայկական (խալդեան) փոխառութիւններ են. ինչպէս Աւարաւ, Վան, Արմե, Մուռ, Կարիճ, Մասիս ևայլն ևայլն, որոնք հայերէնով չեն կարող մեկնուել ամենեւին: Քիչ առաջ բերում արտադրանութեամբ՝ շատ աւելի սակաւաթիւ են անձնանունները: Արանց մէջ կարող ենք յիշել Արամ և Մանավաղ: Առաջինը անշուշտ ծագում է խալդեան Արամէ նշանաւոր թագաւորի անունից: Երկրորդը շատ նման է հնչում Մեցուա արքայական անուն, բայց դա պատահական է և Մանավաղ իրանական անուն է: Մի կողմ ենք թողնում այն բաղաձայն անստոյգ ձևերը, մասնաւորապէս նախաբարկան տոհմանունները, որոնք զանազան հեղինակների կարծիքով՝ ծագում են նախահայկական խալդեան անուններից:

2. ԱՆՄԱՆՈՅ ԱՆՈՒՆՆԵՐ

Խորհնացին իր Պատմութեան Ա. գրքում տալիս է մեզ հայ անունների մի խումբ, որոնց ծագումը բոլորովին անյայտ է: Այս կարգին են պատկանում Հայկ, Արմեակ, Արամայիս, Ամասիա, Հարմա, Արա, Կարդու ևայլն ևայլն, որոնք ապահովապէս հայերէն չեն, քանի որ չեն կարող մեկնուել հայերէնով: Թէ արդեօք սրանք էլ պատկանում են խալդեան շրջանին և կամ հայկական անունների մեծացորդ են և կամ փոխզական օրեէ լեզուից են փոխառնում և կամ թէ վերջապէս Խորհնացու հնարածներն են (զոնէ մի քանիսը), կարելի է գիտութեան այժմեան վիճա-

կում ստուգապէս որոշել: Ստոյգ է ինձ համար, որ Մուռեղ, հայոց պատմութեան մէջ այնպէս սովորական մի անուն, փոխ է առնում հայկական Մուրեիլի անունից: Այս անունով են կոչւում հայկական մի քանի թագաւորներ (Տե՛ս իմ Հայոց Լեզուի Պարտաւիրան, Ա. հատոր, էջ 149):

3. ԲՈՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐ

Բուն հայկական անունների առաջին շրջանը ընկնում է Արշակունեաց ժամանակ: Ազաթանգեղոս, Բուզանդ, Կորին, Խորենացի, Փարպեցի և եղիշէ աւանդում են մեզ այս կարգի բաղաձայն անուններ, որոնք կրկնում են նաև յաջորդ պատմիչների մօտ: Այս անունները զուտ հայկական են, որովհետև մեկնում են հայերէն լեզուով. ինչպէ՛ս Արձան, Տիրայր, Այրուկ, Ասդիկ, Դիւս, Թարիկ, Թարուկ, Թունիկ, Իւխան, Եղբայր, Երանեակ, Զարմայր, Բազուկ, Դոռակ, Առնակ ևայլն: Բուն հայկական անունների մէջ շատ սովորական են կենդանիների և թռչունների անունները, ինչպէ՛ս Առիւծ, Այծեմնիկ, Կորիւն, Արոյս, Գառնիկ, Եզնիկ, Տիկ, Ընջուղ, Մշուրնիկ, ևայլն:

Բուն հայկական անունները, ինչպէս ասացինք, պատկանում են Արշակունեաց շրջանին, աւելի որոշ խօսելով՝ նախաքրիստոնէական հայութեան: Քրիստոնէութիւնից յետոյ սրանք սկսում են կամաց կամաց տեղի տալ. Մեծ Անիշխանութեան կէսից յետոյ, արաբական տիրապետութեան և Բագրատունեաց թագաւորութեան ժամանակ չափազանց սակաւաթիւ են դառնում և Խորինեանց ժամանակ բոլորովին անհետանում են: Ժ. Գարի կէսից յետոյ, երբ սկսեց հայկական դարձումը, բուն հայկական անունները նորից կենդանացան և նրանցից բազմաթիւները, այսինքն խառնով զեղեցիկները, պատմութեան էջերից դուրս բերուելով՝ նորից գործածուել ըս-

կըսեցին, ոմանք կրօնական, ոմանք էլ աշխարհական շրջանակներում, ինչպէս Տիրայր, Կորիւն, Եզնիկ, Գառնիկ, Զարմայր, Երանեակ, Իսխան, բայց ոչ Մրջիւնիկ, Յիկի, Արսոյս և այլն:

4. ՊԱՀԼԱԻԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐ

Պարթևական ազգեցութիւնը հայոց վրայ չափազանց մեծ է: Պահլաւերէնը հայ ազնուականութեան լեզուն էր. պալատականները և նախարարները այդ լեզուով էին խօսում, զիւանական յարաբերութիւնները այդ լեզուով էին կատարւում: Զարմանալի պիտի չթուա ուրեմն եթէ ասենք թէ հին հայոց անուանները որոշ մասը, որոնք մենք զուտ ազգային անուաններ ենք համարում, պարզապէս պահլաւական փոխառութիւններ են. այսպէս օրինակ՝ Վարդան, Վահան, Բագրատ, Ասրնեստին, Դրասամաս, Զարեհ, Սեպուհ, Զօհրապ, Խոսրով, Խոսրովիդուխ, Համազասպ, Արսաես, Դիսակ, Դուրգեն, Անուտ, Ալիսեն, Առասոմ, Արակ, Սանատուկ, Արսավազդ, Տրդատ, Վառմապուհ և այլն և այլն:

Պահլաւական անուններն էլ իրանեան տիրապետութեան անկումից յետոյ սկսեցին մոռացուել. Ռուբինեանց իշխանութեան ժամանակ ամենամեծ մասամբ ջնջուած են արդէն. մնում են միայն նրանք որ ներկայացնում են մեր պատմութեան ամենամեծ դէմքերը, ինչպէս Վահան, Վարդան, Տրդատ և այլն: Հայկական զարթնումին նորից կենդանացան նրանք և այսօրուան հայութեան ամենասիրելի անուններն են:

5. ԱՍՈՐԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐ

Քրիստոնէութիւնն ընդունելուց յետոյ, հայերը առաջին անգամ ընկան ասորական ազգեցութեան տակ: Յունաստանը հեռու էր, իսկ Միջագետքը շատ մօտիկ: Բազմաթիւ ասորի քարոզիչներ կային մեր երկրում, ուր նրանք իրենց լեզուն տարածում էին եկեղեցու բնակից: Եկեղեցական պաշտամունքի լեզուն ասորերէն էր. Աւետարանը ասորերէն էր կարդացւում. հայ երկրաստարդները իրենց ուսումը Եղեսիայի դպրոցումն էին ստանում. Աստուածաշունչը առաջին անգամ ասորերէնից թարգմանուց:

Այս ժամանակաշրջանում մեր մէջ մտան մի խումբ ասորերէն անուններ, ինչպէս Արամ, Աբգար, Եղիեկ, Գաղիսո, Բարգաւրտան և այլն: Ասորական ազգեցութիւնը կարճատեւ եղաւ. չուտով վրայ հասան յայնական և յետոյ զուտ հայկական քաղաքակրթութիւնը, որոնք խեղդեցին ասորականը: Ասորական անուններն էլ ջնջուեցին և նրանցից հազիւ մէկ երկուսը կեանք ունեն այսօր. այն է Աբգար և Եղիեկ, որոնք ապրում են շնորհիւ այն հանգամանքի որ ներկայացնում են մեր առաջին քրիստոնեայ թագաւորի (ըստ աւանդութեան) և մեր ամենից սիրելի բանաստեղծ պատմազգրի անունը:

6. ԵՐՐԱՅԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐ

Երրայական քաղաքակրթութիւնից խորապէս ազդուած ազգերի մէջ դտնում ենք նաև մենք: Ժշմարիտ է թէ այս ազգեցութիւնը անմիջական յարաբերութեանց արդիւնք չէ և յոյների միջոցաւ հասել է մեզ, բայց այնքան սաստիկ է եղել այն, որ շատ տարբեր ձև պիտի չունենար, եթէ անմիջական յարաբերութեան ծնունդը լինէր: Քրիստոնէութեան և Աստուածաշնչի միջոցով երրայերէնից անցել է մեզ անձնանունների մի մեծ թիւ, որ 1600 տարուց ի վեր մեր ամբողջ կեանքն է լցնում: Արամ, Եւա, Աբել, Աբրահամ, Սեբ, Սանակ, Դանիէլ, Դաբիէլ, Դաւիթ, Յսայի, Յակոբ, Զաւարիա, Սողոմոն և այլն և այլն հայ ժողովրդի բոլոր խաւերի համար այնպէս ծանօթ, այնչափ սովորական, այնքան հայացած և այն աստիճան ընտանի անուններ են որ դեռ դարեր ու դարեր պիտի ապրեն, և հազիւ թէ կարելի լինի ասել որ երբեք պիտի կարենան ջնջուել հայութեան և աշխարհի միջից:

Երրայական անունները անցել են մեզ Աստուածաշնչի թարգմանութեան միջոցով, և որովհետեւ մեր Աստուածաշունչը թարգմանուած է յունարէնից և ո՛չ թէ ուղղակի երրայերէնից, ուստի այս անուններն էլ կրում են յունական կնիք: Այստեղ ամենացայտուն կէտը հետեւեալն է. — յունական լեզուի մէջ չկայ Ե ձայնը. ուստի ուր որ երրայերէնը ունի Ե, յոյնը դնում է Ե: Մենք էլ, թէև ունենք Ե ձայնը, բայց հե-

տեկով յունարէնի՝ զնում ենք ա: Այսպէս օրինակ՝ երբայցին ասում է Երուսիմ, իսկ մենք ասում ենք Երուսաղէմ: Այս երևոյթը ընդհանուր է բոլոր Եւրոպական ազգերին:

7. ՅՈՒՆԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐ

Յոյնը Քրիստոնէութեան տարածիչ և համաշխարհային քաղաքակրթութեան դասակն է եղած: Չկայ աշխարհիս մէջ մի ազգ, որ յունական քաղաքակրթութեան որակէ բանով պարտական չլինի: Չինացիք անգամ յունարէնից փոխառեալ բառեր ունեն: Առանձնապէս մեր ազգը ամենամեծ չափով ազդուած է յոյներէր: Եթէ մեր նախաքրիստոնէական քաղաքակրթութիւնն ամբողջապէս պարթևական քաղաքակրթութիւնն էր, մեր յետքրիստոնէական քաղաքակրթութիւնն էլ լիովին յունական է: Մեր գրականութիւնը յունականի ընդօրինակութիւնն է. մեր առաջին գրքերը յոյն հեղինակներից են թարգմանուած. և այս բանը շարունակուել է մինչև Ռուբինեանց թագաւորութիւնը. Աստուածաշունչ, Աւետարան, Մաշտոց, Վարք Սրբոց, Յայտաւորք, Խորհրդատեար՝ յունարէնից են թարգմանուած կամ յունականի օրինակով խմբագրուած:

Այսպիսի խոշոր ազդեցութեան բնական արդիւնքն է նաև յատուկ անունների մի առատ թիւ, որ Դ. դարից սկսած մինչև այսօր տիրապետում է հայ կեանքի վրայ: օրինակ՝ Անաստաս (յարութիւն), Ղեւոնդ (աղիւծ), Վասիլ (թագաւոր), Գեորգ (երկրազոր), Գրիգոր (արթուն), Թեոդորոս (աստուածատուր), Փիլիպոս (ծի սիրող), Կիւակոս (տէրունի), Հռիփսիմէ (անկեալ), Ագապի (սէր), Սեպիան (պսակ) ևայլն:

8. ԱՐԱՐԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐ

Վերևում ցոյց տուեցինք թէ անձնանունները առհասարակ կրօնական բնոյթ ունեն և ըստ այնմ կրօնակից ազգերից առնուելով՝ նրանց կրօնի հետ էլ տարածուել են:

Նկատի ունենալով այս տիեզերական երևոյթը, տարօրինակ է անշուշտ այն հանգամանքը, նոր հայերը, նոյնիսկ Քրիստոնէութեան ամենից պայծառ տարիներում,

ընդունել են կրօնապէս իրենց թշնամի ազգերի անձնանունները, ինչպէս արաբների և թուրքերի: Չկրտւում թէ ինչպէս պէտք է մեկնել այս երևոյթը: Անշուշտ մահմեդականները չտախպեցին մեզ, որ մենք բռնի կերպով ընդունենք իրենց անունները: Եւրեւի այս էլ գերիշխան տարրի բնական ազդեցութեան արդիւնքն է. ազդեցութիւն՝ որ ամէն ձևի ու ամէն հանգամանքի մէջ էլ իր գործը տեսնում է, և փոքր, նուաճուած ազգերը իրեն է քաշում, իրեն է միացնում:

Մեր հին պատմութեան մէջ ծանօթ արաբական անուններ են Աբլխարիպ, Աբուսահլ, Համամ, Մլեհ ևայլն: Ոմանք նաև գործածուած են հայ թարգմանութեամբ, ինչպէս ձենդուկ, որ արաբական Համամ համանիշի թարգմանութիւնն է:

9. ԼԱՏԻՆԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐ

Ռուբինեանց օրով, յարաբերութեանց աճման հետ, շատացաւ նաև լատինական անունների գործածութիւնը, ինչպէս Անսոն, Լեւոն, Զապիլ, Ալիս, Հեբում, Օղոսսիմոս ևայլն: Ռուբինեանց պետութեան անկումով լատին անունները ջնջուեցին և այսօր հազիւ մի քանիսը կենդանի են նրանցից:

10. ՀԱՅ ԿՐԾՆԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐ

Քրիստոնէութեան տարածումից յետոյ, երբայական և յունական անունների հեղեղման ժամանակ, ծագեց հայոց մէջ մի նոր միտք, այն է՝ թարգմանել օտար քրիստոնէական անունները: Յունական Անաստան անունն զէմ դրին Յարութիւն, Ապոստոլի զէմ՝ Առաքել, Թեոդորոսի զէմ՝ Աստուածատուր, Սաւլիի զէմ՝ Խաչիկ, երբայական Սեբի զէմ՝ Մխիթար ևայլն: Այս երևոյթը անշուշտ յունազէտ հայերի գործն էր և ազգային նախանձախնդրութեան մի ձեռնարկ հայոց մէջ: Ուշագրութիւն չէր դարձրել նրանք այն հանգամանքի վրայ, թէ արդեօք այդ թարգմանուած անունների բնաձևը իրապէս գործածական է հայոց մէջ թէ ոչ: Օրինակի համար՝ Անաստաս, Թեոդորոս ևայլն հայոց ծանօթ անուններ են եղած, բայց Ապոստոլ, Սաւլի ևայլն

գործածական չեն եղած մեր մէջ: Թարգմանութեան հետ զուգընթացաբար մտել են նաև նոր նմանակերտ անուններ, բոլորն էլ քրիստոնէական կեանքի բացատրութիւններ, հայ ժողովուրդի մտքին ու սրտին մօտիկ ու հասկանալի բառեր, որով մեր անձնանունների բառարանը կրկնապէս ընդարձակուել է: Այսպէս են Համբարձում, Զատիկ, Դալուս, Մարգար, Տիրասուր, Խաչասուր, Քրիստոսուր, Խաչերես, Մերոն, Կարապետ, Մկրտիչ, Անեսիս, Աւագ, Մաքրունի, Մերունի, Տիրունի և այլն և այլն, որոնք, սկսած այն օրից մինչև այժմ, աւելի կամ նուազ չափով գործածական են մեր մէջ: Մեր մտաւոր զարգացման պատմութեան տեսակէտով շատ հետաքրքիր էր որոշել թէ ե՛րբ է այս անունների ծագման ժամանակը:

11. ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐ

Հայ կրօնական անուններից զուրա կան բազմաթիւ ուրիշ անուններ, որոնք թէև հայերէնի մէջ կազմուած անուններ են, բայց քրիստոնէական հաւատալիքների շուրջը չեն պատուում, այլ իրենց իմաստով ներկայացնում են աւելի իրական կեանքը և շատ անգամ ներկայացնում են աշխարհիկ բանաստեղծական սիրուն պատկերներ: Օրինակ՝ Թուխամ — մազերը սև, Շաղոսկի — որ ոտկի է շաղում, Վարքիբեր — վարդի թերթ, Հերիմագ — հերթի ինչքան նազ ես անում: Այս շարքի անուններից են՝ Զանազան, Վարդերես, Լոյսպարոն, Նորաբել, Վարդըմպու, Անճրեւվարդ, Նորվարդ, Նորսիկին, Վարդամանուկ, Քնարիկ և այլն:

Հայ հասարակ ժողովուրդի, շինականի բնիկ, հարազատ, իւրակերտ անուններն են սրանք, որ եկեղեցական դասի պաշտած կրօնական անունների և ազնուական դասակարգի սիրած օտար անունների չըջանալու բացառիկ փայլով ցոլում են:

ՊՐՈՖ. Հ. ԱՃԱՌԵԱՆ

(Երբանուշէի 2)

ԻՇԽԱՆԱԿԱՆ ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆ ՄԷ

ՎՍԵՄ. ԳԱԼՈՒՍՑ ԿԻՒԼՊԵՆԵԱՆԷՆ
Ս. ԱՅՈՒՌՈՅ ԺԱՌ. ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ԵՒ ԸՆԾԱՅԱՐԱՆԻՆ

Շնորհապարս զգացումներով, յանուն Տեղապահ Սրբազան Հօր, բովանդակ Միաբանութեան եւ Ս. Արուոյ ժառ. Վարժարանի եւ Ընծայարանի Տեսչութեան եւ աշակերտութեան, մեր արագին շնորհակալութիւնը կը յայտնենք Ս. Արուոյ բարեկամ եւ բարերար Վսեմ. Դալուս Կիւլպենկեանին, որ ինչպէս միշտ, այս առիթով եւս ժառ. Վարժ.ի եւ Ընծայարանի կրթական ծախսի ի հաշիւ, երեք տարւան համար կը նուիրէ 1000-ական սրերին:

Ազնուական այս կերպը, օժանդակելու ազգին հոգեկան ու մտաւոր կարիքներուն, Վսեմ. Դալուս Կիւլպենկեանի իմաստութեան եւ առաքինութեան ամենեւնի ցայտուն գիծն է, բարերարելու իր այս ձեւին մէջ բարիքի սխրագին իմաստասիրութիւն մը կայ, որուն վրայ կարելի չէ չհիանալ:

Ս. Դիւսագրի օրհնութիւնը կը հայցենք ի արեւ, մեր պատուական բարերարին համար, ու կը մաղթենք որ Տեր երկար ու բարգաւաճ ընէ իր սարիները, յօգուտ եւ ի փառս մեր բազմակարօս ժողովուրդին եւ եկեղեցիին:

ՎՍԵՄ. ՆԵՐՍԷՍ ԿԻՒԼՊԵՆԵԱՆԷՆ

ՏԱՐԵԱՆ 360 ՍԵՐԼԻՆԻ ՏԵԻԱԿԱՆ ՈՒ
ԻՇԽԱՆԱԿԱՆ ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆԸ
Ս. ԹԱՐԳՄԱՆԱՅՑ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ

Նոյն կերպով, Կիւլպենկեան ազնուական տոնմի մէկ ուրիշ ներկայացուցիչը, Վսեմ. Ներսէս Կիւլպենկեան, ի յիշատակ իր վաղամեռիկ որդւոյն Պողոսի, տարեկան 360 սրերին ի հաշիւ նուիրատուութիւն մը կ'ընէ Ս. Արուոյն հովանիին ներքեւը եղող Ս. Թարգմանչաց ազգային վարժարանին:

Տեղապահ Ս. Հօր, Ս. Յակոբեանց Միաբանութեան եւ Ս. Թարգմանչաց Տեսչութեան եւ բազմահարիւր աշակերտութեան արագին շնորհակալութիւնը ազգին բարերար այս պատուական հայուն եւ նուիրատուն: Աստուծային օրհնութիւնը եւ մխրատութիւնը իր ամենեւնի քաղցր սիրոյն մէջ խոցում իր հոգիին, որ գիտէ այսկերպ ազնուօրէն մխրաբել ազգին զաւակները, իր կորսնցուցած աւուրիկ Պողոսիկի սիրոյն եւ յիշատակին մէջ: